

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/4

12 հուլիսի 2013 թ.

Քննարկվեց <Ստաֆ> ՍՊԸ 01.07.2013 թ-ի դիմումով բերված բողոքը «ԿԱ ՊԵԿ Նաիրիի ՏՀՏ կողմից հաստատագրված վճարի գծով լրացուցիչ հաշվարկված պարտավորության վերաբերյալ:

<Ստաֆ> ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

<Ստաֆ> ՍՊ ընկերությունն իրականացրել է ավտոտրանսպորտային գործունեություն: Նշված հանգամանքը, հարկային օրենսդրության համաձայն, հանգեցրել է նրան, որ ընկերությունը հանդիսացել է հաստատագրված վճար վճարող:

Ընկերությունը Երևանի քաղաքապետարանի <Երևանտրանս> ՓԲԸ-ի հետ կնքել էր պայմանագրեր՝ թիվ 51 և թիվ 96 երթուղիների սպասարկման մասին: Հիշյալ պայմանագրերի գործունեության ողջ ընթացքում <Ստաֆ> ՍՊԸ-ն պարտաճանաչ կատարել է բոլոր հարկային պարտավորությունները՝ սահմանված հարկատեսակների մասով:

Երևանի քաղաքապետի 22.10.2012 թ-ի հ.6961-Ա որոշմամբ դադարեցվել է <Ստաֆ> ՍՊԸ կողմից իրականացվող հ.96 երթուղու սպասարկումը, պայմանագիրը լուծվել է, իսկ երթուղու հետագա սպասարկումն իրականացվել է այլ կազմակերպության՝ <Գրիգորյաններ տրանս> ՍՊԸ-ի կողմից: Երևանի քաղաքապետի վերը նշված որոշման համաձայն ընկերությունը 29.10.2012 թ-ին նաև հանձնել է միկրոավտոբուսների ժամանակավոր դեղին հիմնագույնի համարանիշերը:

Այնուհետև Երևանի քաղաքապետի 27.11.2012 թ-ի հ.7554-Ա որոշմամբ նաև դադարեցվել է <Ստաֆ> ՍՊԸ կողմից իրականացվող հ.51 երթուղու սպասարկումը, պայմանագիրը նույնպես լուծվել է, իսկ երթուղու հետագա սպասարկումն իրականացվել է <Երևան ավտոբուս> ՓԲԸ-ի կողմից: Երևանի քաղաքապետի այս որոշման համաձայն ընկերությունը 03.12.2012 թ-ին նաև հանձնել է միկրոավտոբուսների ժամանակավոր դեղին հիմնագույնի համարանիշերը:

<Ստաֆ> ՍՊ ընկերությունը հաշվառված է Նաիրի ՏՀՏ-ում: 2012 թ-ի դեկտեմբերի 12-ին Երևանի քաղաքապետի վերը նշված երկու որոշումները մուտքագրվել են Նաիրի ՏՀՏ-ում, սակայն հարկային մարմնի կողմից շարունակվել է հաշվարկվել հաստատագրված վճարը:

Այսպիսով ակնհայտ պարզ է, որ <Ստաֆ> ՍՊ ընկերությունը վերոհիշյալ պայմանագրերի լուծումից հետո այլևս ավտոտրանսպորտային գործունեություն չի իրականացրել:

08.04.2013 թ-ին <Ստաֆ> ՍՊ ընկերության կողմից «ԿԱ Պետական եկամուտների կոմիտե» ներկայացվել է դիմում-խնդրանք հետևյալի մասին.

հաշվի առնելով, որ հիշյալ երթուղիները՝ հոկտեմբերի 22-ից հ. 96 և նոյեմբերի 27-ից հ. 51, սպասարկվել են այլ ընկերությունների կողմից և հետևաբար հաստատագրված վճարը նույն ժամանակահատվածի համար կիրառվել է նրանց նկատմամբ ու վճարվել նրանց կողմից /կից ներկայացվում է վճարման անդորրագիրը/, և փաստորեն նույն երթուղիների շահագործման նույն ժամանակահատվածի /նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներ/ համար հաշվարկվել է կրկնակի անգամ՝ երկու տարբեր կազմակերպությունների նկատմամբ, ուստի <Ստաֆ> ՍՊ ընկերությանը խնդրել է ազատել /փաստորեն չիրականացված գործունեության համար/ հաշվարկված հարկային պարտավորությունից և դրանից բխող տույժերից և տուգանքներից:

28.06.2013 թ-ին միաժամանակ ստացել ենք պատասխան գրությունը և Նաիրի ՏՀՏ կողմից վարչական դատարանին ուղղված հայցադիմումը, որում <Ստաֆ> ՍՊԸ-ից

պահանջվում է 2012 թ-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների հաստատագրված վճարը, տույժերը և տուգանքները մինչ օրս (ապառք 1827.2 հազ. դրամ և 461.9 հազ. դրամ տույժ):

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է կատարել վերահաշվարկ՝ հաշվի առնելով ներկայացված փաստաթղթերը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով «Ստաֆ» ՍՊԸ և Նաիրիի ՏՀՏ ներկայացուցիչների ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Երևանի քաղաքապետի 22.10.2012 թ-ի հ.6961-Ա որոշմամբ դադարեցվել է «Ստաֆ» ՍՊԸ կողմից իրականացվող հ.96 երթուղու սպասարկումը, պայմանագիրը լուծվել է, իսկ երթուղու հետագա սպասարկումն իրականացվել այլ կազմակերպության՝ «Գրիգորյաններ տրանս» ՍՊԸ-ի կողմից: Այնուհետև Երևանի քաղաքապետի 27.11.2012 թ-ի հ.7554-Ա որոշմամբ նաև դադարեցվել է «Ստաֆ» ՍՊԸ կողմից իրականացվող հ.51 երթուղու սպասարկումը, պայմանագիրը նույնպես լուծվել է, իսկ երթուղու հետագա սպասարկումն իրականացվել է «Երևան ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից:

Նշվեց, նաև, որ 2012 թ-ի դեկտեմբերի 12-ին Երևանի քաղաքապետի վերը նշված երկու որոշումները մուտքագրվել են Նաիրիի ՏՀՏ-ում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի. «Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով»:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ընկերության կողմից անհնար է եղել գործունեություն իրականացնել անհաղթահարելի ուժի, այսինքն երթուղիների սպասարկման պայմանագրերի լուծման և երթուղիները այլ կազմակերպությունների կողմից շահագործվելու պատճառով, իսկ հաստատագրված վճարի գծով պարտավորությունները, ըստ էության, դադարած լինելով ընկերության համար, կատարվել են երթուղիները սպասարկող այլ կազմակերպությունների կողմից, ՀՀ ԿԱ ՊԵԿ Նաիրիի ՏՀՏ կողմից ընկերության նկատմամբ 2012 թ-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համար հաշվարկված հաստատագրված վճարի գումարները ենթակա են նվազեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. «Ստաֆ» ՍՊԸ 01.07.2013 թ-ի դիմումով բերված բողոքը բավարարել:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ Նաիրիի տարածքային հարկային տեսչությանը.

«Ստաֆ» ՍՊԸ անձնական հաշվի քարտից նվազեցնել 2012 թ-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համար հաշվարկված հաստատագրված վճարի գումարները:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ